ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2012թվականի N 417-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ Ժ. ՍԱՀԱԲԱԼՅԱՆԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՏԱԲԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 17) և 33 հոդվածի 6) կետերով, «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, նկատի ունենալով 2012թ. սեպտեմբերի 19-ին հանրահավաք կազմակերպելու մասին Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի թեկնածու Ժ. Սահաբալյանի նախընտրական շտաբի իրազեկումը և Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Դիլիջանի բաժնի կարծիքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2012թ. սեպտեմբերի 19-ին Դիլիջան քաղաքում նախընտրական հանրահավաք կազմակերպելու մասին Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի թեկնածու Ժ. Սահաբալյանի նախընտրական շտաբի իրազեկումը ընդունել ի գիտություն:
2. Հանրահավաքը անցկացնել իրազեկման մեջ նշված վայրում և ժամկետում՝
1) հանրահավաքի վայրը՝ Դիլիջանի կենտրոնական հրապարակ
2)հանրահավաքի սկիզբը՝ ժամը 16:00
3)հանրահավաքի ավարտը՝ ժամը 19:00
4) հանրահավաքի մասնակիցների մոտավոր թիվը - 1000 մարդ:
3. Սույն որոշման մասին հայտնել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժնին և հանրահավաքի կազմակերպիչներին:

4.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին՝ իրականացնելու սույն որոշումից բխող գործառույթները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱԲՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 14
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2012թվականի N 418-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 750-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, կադաստրային քարտեզի 750-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 150.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Հատուկ պահպանվող տարածքների հողերի» կազմում:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Հատուկ պահպանվող տարածքների հողերից», 750-001 ծածկագրով հողամասի մի մասին՝ 150.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Գետափնյա փողոց թիվ 3/9:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 750-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 150.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 14
ք.Դիլիջան